

ՀԱՅ-ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

ՍԵՂՐԱԿ ԹՆՈՒԱՑԵԱՆՑԻ

II.

Պարոն Գրիգորը—այդպէս էին անւանում նորան ամենքը—
դպրոցական կրթութիւնն չէր ստացել: Նա Պարսկաստանի Սալմաստ
քաղաքիցն էր, և այնտեղի աւետարանական միսիոնարների ազդե-
ցութեան տակ, ինչպէս ինքն ասում էր շուտով էր և իրան
նւիրել Աստուծոյ թագաւորութեան տարածելու գործին: Նա ճա-
նապարհորդելով անգլիացի միստր Իստին միսիոնարի հետ Պարս-
կաստանից եկաւ Բագու: Այնտեղ ժողովարանում թէ միստր Իստինը
և թէ պ. Գրիգորը մի քանի անգամ քարոզեցին և լաւ հաւանու-
թիւն գտան: Այնտեղից գնացին Շամախի և նոյնպէս յաջողութիւն
գտան: Բայց առանձնապէս ժողովրդի ուշադրութիւնը գրաւեց Գրի-
գորը իւր քարոզներով և որովհետեւ այն ժամանակները բողոքականները
մի մշտակաջ փորձառու քարոզիչ չունէին, քանի որ Սարգիս վար-
դապետը շատ էր ծերացել, ուստի թէ շամախեցի և թէ բագուցի
բողոքականները վճռեցին պահել Գրիգորին որպէս քարոզիչ, որը
պիտի մշտակաջ բնակութիւն ունենար Շամախում, տարեկան մի
քանի անգամ դնար Բագու և այլ տեղեր քարոզելու համար:
Պ. Գրիգորը համաձայնեց մնալ և ստանում էր տարեկան 600 ռ.
բացի բնակարանից:

Ինչն էր պարոն Գրիգորի մէջ գրաւում ժողովրդին, քանի որ

1) Տես «Մուրճ» № 2, 1893 թ.:

Նա մի համարեա թէ անուս մարդ էր, որ ոչ կանոնաւոր գրել էր կարողանում և ոչ մշակած լեզու ունէր: Խոստովանում ենք, որ սկզբում ժողովուրդը համարեա սիրահարած էր նորա վերայ: Եւ ոչ միայն բողոքականները, այլ և բաղմաթիւ լուսաւորչականներ անդադար հաճախում էին նորա քարոզներին և շատ բաւական էին մնում: Նոյն իսկ լուսաւորչականներից ոմանց մէջ խօսք էր ծագել, թէ ինչ լաւ կը լինէր, եթէ նորան թոյլ տային հայոց եկեղեցում քարոզելու, որ ի հարկէ պարոն Գրիգորը ոչ մի պատճառով չէր մերժիլ, մանաւանդ որ ինքը իսկապէս լուծերական եկեղեցուն չէր պատկանում ու շատ էլ համակրութեամբ չէր նայում բուն լուծերական եկեղեցու հոգեւորականների վերայ: Զը շեղւենք հարցից: Մենք կամեցանք բացատրել, թէ ինչով էր պ. Գրիգորը ամենքին գրաւում:

Նախ և առաջ պէտք է խոստովանել, որ այդ մարդը մի վերին աստիճանի եռանդոտ բնաւորութիւն էր ներկայացնում (խօսքիկ): Նորա բնաւորութիւն ունեցող մարդիկը, եթէ կեանքի հանգամանքներից տոկսած աւազակութեամբ պարապեն՝ առնառարսափելի աւազակը կը դառնան, եթէ վաճառական լինեն, ոչ մի ձեռնարկութիւնից չեն վախենալ. եթէ ուրեմն հոգեւորական լինեն՝ կատարելապէս կը նւիրւեն իրանց սիրած դադափարի տարածմանը: Այդպէս էր և պ. Գրիգորը: Նա հանդիստ չուներ: Ամբողջ օրը նա կամ պիտի ամբիոնի վերայ լինէր, կամ մի մասնաւոր ընտանիքում կրօնական խօսակցութիւն բացէր ու սկսէր քարոզել, կամ փողոցում մի մարդ գտնէր ու «տիրս» խօսքը՝ նորան բացատրէր: Եթէ հանգստանալու համար նա բազմ դուրս եկած լինելով յանկարծ նկատէր, թէ կտուրի վերայ մշակներ են բանում, իսկոյն պիտի կտուր բարձրանար, մի քարի վրայ նստէր և «Յիսուսի սիրոյ» մասին խօսակցէր և հարց ու փորձ անէր: Միւս կողմից նա ոչ մի մարդուց չէր փախում, ոչ ռից չէր խորշում: Կը պատահէր նորան ցնցոտիների մէջ փաթաթուած մի աղքատ, — պ. Գրիգորը կը կերակրէր նորան: Կը լսէր թէ այս ինչ ընտանիքում մի պառաւ կին կամ ծերունի կա, որը ժողովարան դալ չէ կարողանում, իսկոյն տեսութիւն կը զնար նորան, կը քարոզէր, աղօթք կանէր: Կը պատահէր կառքով մի տեղ գնալ, երբ տեղ

կը հասնէր, մինչև որ կառապանին չը չղբացնէր և միասին աղօթք չ'անէին բաց չէր թողնիլ նորան։ Պր. Գրիգորի համար ամենքն էլ ընկեր էին, հասակաւոր թէ փոքրիկ երեխայ, քրիստոնեայ թէ մահմետական, հարուստ մեծատուն, թէ մի անբաղդ ջրկիր...

Իսկ քարոզելու թէ խօսակցութեան ժամանակ պ. Գրիգորը այնքան հասարակ և հետաքրքիր օրինակներ էր բերում, այնքան անեկղտոներ (նոյն իսկ զւարճալի) և դէպքեր էր պատմում, այնքան կրկնում էր իւր մոքերը, որ ապուշն էլ նորա խօսքերի մեծ մասը հասկանում էր առանց զլուխ ցաւացնելու։ Պր. Գրիգորը մասնաւոր խօսակցութիւնների ժամանակ գիտէր թէ ում հետ ինչից պէտք է սկսել և ինչ ոճով խօսակցել։ Թուրքի հետ խօսակցելուց նա Գրիստոսի անունը չէր տալիս (այդ դեռ վաղաժամ էր կարծում), այլ կը հարցնէր թէ ինչպէս է կարծում իւր «մուսուլման աղբարը»՝ արդեօք ո՞ր մարգարէին պէտք է աւելի յարգել, նորան, որը ասում է «սպանիր», թէ նորան որը ասում է «մի սպանիր...»։ Երրորդութիւնը բացատրելու համար բռնում էր թուրքի չուխայի ծալից, երեք ծալք կազմում և հարցնում, թէ քանի հատ են ծալքերը։ Եւ կը թուրքը պատասխանում էր թէ «երեք» է, պ. Գրիգորը բաց էր թողնում ծալքերը և դարձնելով «մէկ», աւելացնում էր «այդպէս» է երրորդութիւնը։ Նա կարողանում էր մեծ ազդեցութիւն անել մտածելու անվարժ զլուխների վերայ։ Ժամանակորամանկ օրինակներով։ Ահա որ նա ծնունդ էր խաչագողների երկրի...

Ահա թէ ինչու էր սիրահարւած նորա բնաւորութեան և դործունէութեան վերայ բողոքական ամբոխը։

Բայց մի բան որ նկատուում էր տաղանդաւոր քարոզչի խօսակցութեան մէջ, որը սակայն ամբոխը անընդունակ էր ըմբռնելու, այդ նորա մտածողութեան և խօսքերի մէջ նշմարուող տրամաբանութեան կատարեալ բացակայութիւնն էր, որը նկատուում էին աւելի զարգացած երիտասարդները։ Ուստի որքան մեր քարոզիչը գրաւիչ էր ամբոխին, նոյնքան անտանելի էր երիտասարդների աւելի զարգացած մասի համար։ Ամբոխը նորան սիրում և համակրում էր, բայց կային բողոքական երիտասարդներ, որոնք նորա եռանդը հաւանելով հանդերձ, անօգուտ, նոյն իսկ փնասակար գոր-

ծիչ էին համարում նորան։ Այդ հանգամանքը պարոն Գրիգորը շուտ նկատեց և լաւ էր ըմբռնել թէ ով է լինելու իւր պաշտպանը և ով հակառակորդը, և թէ ինքը ինչ ուղղութեամբ պիտի քարոզէր և գործէր։

Պարոն Գրիգորը շատ փորձերից եկել էր այն եզրակացութեան, որ ինքը աւելի յաջողութիւն և ազդեցութիւն է ունենում ազէտ ամբոխի մէջ, ուստի նա ղլխաւորապէս աշխատում էր սոցա վերայ աղղել, բայց չէր մոռանում և ձեռք գցել բողոքական երիտասարդներից աւելի թուլամիտներին։ Իսկ այնպիսի սակաւաթիւ երիտասարդներից, որոնց հետ «դժուար էր խօսելը» ինչպէս ինքն ասում էր, մեր քարոզիչը միշտ խորշում էր... Եւ եթէ նա պատահմամբ այդպիսիների հետ շփուում էր, միշտ աշխատում էր խօսակցութիւնը կողմնակի խնդիրների վրայ դարձնել, որ «ոչ շիշը այրէր և ոչ էլ խորովածը»։ Բայց և այնպէս չէր մոռանում այդպիսիներին և թէ իւր քարոզների մէջ, թէ իւր համակրողների շրջանում խօսակցելիս ամեն կերպ հարձակում էր իւր հակառակորդների ուղղութեան վերայ։ Մի անգամ ընդ միշտ մեր քարոզիչը որոշել էր, թէ ով որ իրան հակառակում է, նա ուրեմն և անհաւատ է, կորած է, Փրիստոսի և երկնքի արքայութեան թշնամին է։ Դոն-Փիշոտի նման նա կռւում էր քամու ջրաղացների դէմ։ Շատ անգամ էր նա քարոզում «անհաւատութեան» դէմ, որը նորա ասելով «թորը արմատներ էր գցել մեր երիտասարդութեան մէջ»։ Եւ սորա պատճառը նա համարում էր ուսումը, գիտութիւնը մի կողմից, հացոց «անհաւատ» գրականութեան ազդեցութիւնը միւս կողմից։ Նա անհրաժեշտ էր համարում «իւր հօտի ձեռքը զէնք տալ» անհաւատութեան դէմ պաշտպանելու համար... Եւ ի՞նչ էր նորա երեւակայած թշնամիների դէմ գործածած զէնքը։ Ահա թէ ինչ։ Նա իւր քարոզների մէջ աշխատում էր ներկայացնել գիտութեան ներկայացուցիչներին, որոնց մասին նա ոչ կարդացել էր և ոչ սովորել, այլ կիսատ պոռտ հասել էր նորա ականջին զանազան թերուս միսիօնարներից, որպէս անասուած և անբարոյական մարդիկ։ Բաբունը (այսինքն Բէկօնը) գիտնականների հայրն է, բայց անհաւատ և ամենաանբարոյական մարդն էր, սիրում էր նա շատ անգամ կրկնել իւր քարոզների մէջ... Դարւինի մասին նույնպէս

նորա ականջին ինչ որ հասել էր, և նորան հերքելու համար պ. Գրիգորը, չիմանալով ոչ մի դրական միջոց, դիմում էր զանազան զուարճալի անեկդոտների: Ցեսնելով որ հայոց նոր զրականութիւնը շնորհիւ երիտասարդների աշխատութեան փոքր իշատէ մտաք էր գործել ժողովրդի մէջ և շարունակում էր ազդեցութիւն ունենալ մտքերի վերայ, նա աշխատում էր արատաւորել այդ զրականութիւնը և նորա ներկայացուցիչներին ժողովրդի աչքին... Ուստի իւր քարոզների մէջ գործ էր ածում օրինակ հետեւեալ ականարկները. «մեր մի տաղանդաւոր վիպասանը, որը մեծ յարգանք է վայելում շատերի կողմից, բայց որը տարաբաղդաբար ամենասոսկալի անհաւատներից մինն է...» Եւ յետոյ մասնաւոր խօսակցութիւնների մէջ պատմում էր, թէ ինչպէս ինքը մի անգամ տեսութեան է գնացել Բաֆֆին, որը իմանալով իւր ինչով զբաղւած լինելը, սաստիկ հակակրօնութիւն է ցոյց տւել Աստուծոյ խօսքի տարածողներին և այլն: Այդպիսի ակնարկներ քարոզների մէջ, և պարզ բամբասանքներ մասնաւոր խօսակցութիւնների ժամանակ անում էր նա և Արծրունու մասին և Ստեփաննոս Նաղարեանցի մասին և այլն: Նույն կարծիքով «Մեղուն»-ի և «Նոր-Դար»-ի նման թերթերը շատ չէին փնասում «Տիրոջ հօտի» մեծանալուն. իսկ մեծ դժւարութիւններ յարուցանում են «Մշակ»-ը և նորա մեր մէջ ունեցած աշակերտները (այսինքն գործող բողոքական երիտասարդները): Եւ այդ վերջինների յարգանքը նա աշխատում էր զցել ժողովրդի աչքին և պէտք է խոստովանել, որ շատ էր չաջողութիւն ունենում:

Պարոն-Գրիգորը մօտ 10 տարի գործեց հայ-բողոքական համայնքի մէջ և բաւական շատ փնասակար ազդեցութիւն ունեցաւ: Նոր կազմած յառաջադէմ բանակը, որը բաղկացած էր մեծ մասամբ թէև քիչ-շատ զարգացած, բայց տակաւին անփորձ և տուկունութիւն, ամբողջութիւն դեռ ձեռք չը բերած երիտասարդներից, պ. Գրիգորի ազդեցութիւնից թուլացաւ, կորցրեց իւր համակրանքը և ցրեց: Այդ երիտասարդներից մի քանի թուլամիտները դարձան պ. Գրիգորի հաւատարիմ հետևողները, մի քանիսը աւելորդ համարեցին մի «փթած համայնքի» մէջ գործելը, միւսներն էլ տեսնելով հանգամանքների անյաջող կերպարանք ստացած լինելը

առժամանակ հեռու են կանգնած և մտածում են մի փոքր կազմուցում, մի փոքր աւելի ուժեղ և փորձառու դառնալուց յետոյ, նորից ասպարէզ մտնել և բարձրացնել նորից բողոքական համայնքի մէջ մտաւոր և բարոյական ճշմարիտ լուսաւորութեան դրօշակը:

Այժմ ահա մի քանի տարի է, որ ինքը պ. Գրիգորն էլ կառավարութեան կարգադրութեամբ հետացրած է Կովկասից, սակայն նորա ազդեցութիւնը դեռ ամրապնդւում է համայնքի մէջ և նորա հաւատարիմ աշակերտները շարունակում են պահպանել բողոքական ժողովուրդը իւր աւանդական տղիտութեան մէջ: Նոքա թէև Գրիգորի ընդունակութեան և ժիրութեան մի փոքրիկ մասն էլ չունին իրանց բնաւորութեան մէջ, սակայն յաջողում է նրանց իրանց յանձնառած գործը, որովհետև մի քնած և յետապէս ամբողջ անշարժ և անփոփոխ դրութեան մէջ պահելու համար առանձին ժիրութեան և ընդունակութեան կարիք չը կայ:

Ընթերցողը տեսաւ որ բողոքական համայնքի մէջ եղել է և կան գործող կամ գործել ուզող երիտասարդներ, որոնք իրաւունք ունեն ազգի լուսաւոր երիտասարդութեան կողմից համակրութիւն վայելելու: Յաւալի է միայն որ սոցա թիւը փոքր է, և սոքա բողոքականների մեծագոյն մասի կողմից եկեղեցւոյն ֆնասակար մարդիկ են համարուում: Իսկ բողոքականութեան մեծամասնութիւնը, եթէ կարելի է այդպէս ասել «պահպանողական բանակը», այլ կերպ է մտածում, այլ կերպ է ապրում, այլ կերպ է գործում: Աւ ահա մենք կանցնենք մի կարճառօտ հայեացք գցելու վերջիններիս կեանքի, յատկութիւնների, մտածողութեան և գործունէութեան վերայ:

Պահպանողական բանակը կազմում են համարեա բոլոր հասակը առած բողոքականները և երիտասարդների կէս մասը: Այդ բանակի մէջ կան մի քանի խմբեր, որոնք միմեանցից որ և է գաղափարով կամ թէ լոկ ձևական պատկանելութեամբ՝ զանազանում են: Ոմանք ձևապէս (формально) պատկանում են լուծերական եկեղեցւոյն, միւսները լուսաւորչական եկեղեցւոց գուրս են, սակայն չեն էլ կամենում մտնել լուծերական եկեղեցւոյ մէջ ¹⁾, երրորդները

¹⁾ Սոցա մէջ միտք կալ երբ և իցէ կազմել լուծերական կոնսիստո-

նոյն իսկ մեռում են լուսաւորական եկեղեցոյ մէջ, սակայն աւելի համակրում են նրանց, քան թէ լուսաւորական հոգեւորականներին և այլն: Սակայն այդ զանազանութիւնները չնչին բաներ են, որովհետեւ իսկապէս ամենքն էլ նոյն ոգին, նոյն ուղղութիւնը ունեն, նոյն սկզբունքները և յատկութիւններն են ցուցնում իրանց կեանքի մէջ: Պարոն Գրիգորը, որի վերայ մենք փոքր ի շատէ մանրամասն կանգ առանք, իւր էութեամբ հայ-բողոքականութեան ամենաճիշդ տիպն է ներկայացնում, այնպէս որ եթէ մենք կա՛մենանք ամբողջ համայնքը մի անհատի մէջ պատկերացրած տեսնել, այդ նպատակի համար ամենալաւ անձնաւորութիւնը պ. Գրիգորն է: Բայց այդ պարոնի մասին խօսելով մենք նկատի առինք միայն նորա յարաբերութիւնը երիտասարդութեան հետ, իսկ այժմ կը նայենք համայնքի վերայ մի փոքր բազմակողմանի տեսակէաներից, ցոյց տալով որքան կարելի է նորա գլխաւոր յատկութիւնները և գաղափարները:

1) Պահպանողական բանակի մէջ ամեն բանից առաջ աչքի է ընկնում կրօնասիրութեան չափազանցութիւնը: Բողոքականների կրօնասիրութեան դէմ մենք ոչինչ չունինք ասելու. բայց մենք ընդդէմ ենք չափազանցութեանը: Մեր ժամանակում մենք խելագար կը համարենք այն մարդուն, որը մոլորկային դէմ լինէր: Բայց փորձեցէք լուրջ ձեր բոլոր ժամանակը միայն անդադար մոլորկայ լսել, դուք շատ շուտ կը ձանձրանաք, նոյն իսկ կը զգէք և կը կամենաք փախչել մի այնպիսի անկիւն, որտեղ ոչ միայն մոլորկայի բացակայութիւն է տիրապետում, այլ և առհասարակ ոչ մի ձայն չէ լսւում, կատարեալ լռութիւն է ամեն կողմ: Բանաստեղծութիւնն էլ, գիտութիւնն էլ ուրեմն և կրօնն էլ, քարոզն էլ անախորժելի և զգւելի են դառնում, երբ նրանք չափից դուրս շատ են գործածւում, ինչպէս այդ անում են լողողականները: Շատ բո-

րիակից (ուրեմն և դերմանացիներից) անկախ համայնք, սակայն կառավարութիւնը առ այժմ արգելք է դառնում այդ մտքին: Անուամենայնիւ աղապիսիները ոչ լռութեական եկեղեցի մտնելու խնդիրք են ներկայացնում, ոչ էլ վերադառնում են լուսաւորչական եկեղեցին, այլ իրանք իրանց միջոցով են, հաղորդում են, պատկում են ու թաղում են, և անանում են իրանց ազատ-աւետարանականներ:

ղորականներ, իրանց տնտեսական գործերից բաց, բոլոր մնացեալ աղատ ժամանակը գործադրում են կամ քարոզներ լսելով, կամ կրօնական խօսակցութիւններով, կամ կրօնական երգեր երգելով և այլն: Այդ բաւական չէ: Առաւօտեան թէյից առաջ բողոքականը պիտի աւետարան կարդայ ու աղօթէ իւր ընտանիքի հետ, յետոյ մենակ իւր համար աղօթէ, ճաշի սկզբում և վերջում, ընթրիքի սկզբում և վերջում պիտի աղօթէ, երեկոյեան քնելուց առաջ պիտի աղօթէ: Մանաւանդ չափը ու սահմանը այդ դէպքում մոռացել են Շամախու բողոքականները, որոնք ունին բացի մասնաւորներից բազմաթիւ հասարակական աղօթքի և քարոզի ժամեր: Շաբաթուայ համարեա ոչ մի երեկոյ տանը չեն անցուցանում իրանց ընտանիքի հետ խօսակցելով և ուրախանալով, այլ կամ ժողովարանում կամ իրանցից մէկի տանը քարոզի, կամ աղօթքի, կամ կրօնական խօսակցութեան ժամ են ունենում: Կիրակին առաւօտից մինչև երեկոյ աղօթքների, քարոզների և կրօնական երգերի մէջ են անցուցանում: Այդ բաւական չէ: Ցանք հիւր կընդունին՝ խօսակցութիւնը կրօնական է, խանութում միմեանց կը հանդիպեն՝ նոյնն է. դաշտը դուրս կը գան մաքուր օդ ծծելու՝ աղօթելուց բաց ուրիշ բան չը գիտեն. հարսանիքներում նոյնպէս, սոքա իրանց երազումն էլ են աղօթում և քարոզներ խօսում, միշտ ի հարկէ միեւնոյն նիւթի մասին, թէ դժոխքը այդպէս, սատանան այնպէս, բաց թէ կեանքը ինչպէս, այդ մասին նոքա չեն մտածում... Նոցանը մահն է միայն: Այդ խօս կատարեալ ճգնաւորի կեանք է և այդպիսիները դեռ համարձակում են ծաղրել այն արեղաներին, որոնք վանքերի մէջ են անցուցանում իրանց կեանքը: Ես համոզւած եմ որ վանքերի մէջ կեանքը այնքան ճգնաւոր չէ, որպէս Շամախու բողոքականների մէջ:

Շատ հասկանալի է որ համանման սկզբունքներին ծառայելով մեր բողոքականները մի տեսակ ատելութեամբ պիտի վերաբերեն դէպի աշխարհային կեանքը, որի վերայ բողոքականները սաստիկ պես սիմիստական աչքով են նայում: Երբ դուք բողոքական ծնողին նկատէք թէ իւր երեխային այս ու այն կերպ պահելով, կարելի է մրսեցնել, հիւանդացնել, ձեզ պատասխանում է, թէ որքան երեխան շուտ մեռնէ այնքան բաղդաւոր է, հետևապէս հիւանդանալուց շատերը

այնպէս էլ թողնում են ասելով՝ ինչ որ կը լինի, թող լինի Մի բողոքական իմ մօտ տեսնելով Վերկար կեանք» վերնագրով գիրքը, հարցրեց թէ արդեօք չ'կայ այնպիսի մի գիրք, որ սովորցնէ, թէ ինչպէս կարող ենք մեր կեանքը կարճացնել, որ այս փուլ աշխարհ-քիցը շուտ ազատենք: Ամեն մեռնողի յետքից ուրսխութիւն են յայտնում, ասելով թէ ւերանի նորան, որ շուտ բաղաւորւեցաւ Մի թեթեւամիտ բողոքական, որի չափահաս աղջիկը գիշերը մեռել էր, միւս օրը պատահող բարեկամներին ասում էր՝ Ձեզ պիտի ուրախու-թեան աւետիք յայտնեմ, աղջիկս մեռաւ: Պարզ է որ այդպիսի հալեացքը կեանքի վերայ պիտի թուլացնող, ծուլացնող ազդեցու-թիւն ունենայ: Ես տեսել եմ Շամախում արհեստավորներ, որոնք ժամի 3-ից 4-ից խանութը կողպում էին, որ զնան ժողովարանի պարտիզում ծալապատիկ նստեն ու գլուխը քարշ գցեն: Երբ սոցա շուտ գործը դադարեցնելու պատճառը հարցնում էի, պատասխա-նում էին՝ «էհ, միւսնոյն չէ, այսօր կանք, վաղը պիտի մեռնենք, մի կերպ կ'ապրենք էլի»: Մանաւանդ այդ ուղղութիւնը փնտսում է վա-ճառականներին, որոնք չեն մտածում մուշտարի աւելացնել, ապ-րանքը շատացնել, գործը լացնացնել, այլ մի անգամ ունեցածի վե-րայ պարապ նստում են, սպասելով թէ ինչ որ կը լինի, թող լինի: Եւ այդ սկզբունքին հետեւելը շատերին տնտեսապէս յետ է գցում:

Ի՞նչ ասել կուզի, որ այդ թուլութիւնը ազդում է և հասարա-կական գործերի վերայ... Խորհուրդի ժամերին բողոքականը լռում է, որպէս թէ «բերանից քրէհ են առնելու»: Նա ոչ կարծիք է յայտնում, ոչ մի միտք է պաշտպանում, ոչ հակառակում է, ոչ էլ համակրութիւն է արտայայտում... Այլ սպասում է համբերութեամբ թէ երբ պիտի ժամը վերջանայ, որ տուն գնայ: Եւ իւր այդ լռութեամբ կարծես մեր բողոքականը կամենում է ասած լինել՝ «է՛հ, թողէք ամեն ինչ այն-պէս, ինչպէս որ կայ, այսօր կանք, վաղը մեռնելու ենք: Ում ընտ-րում էք ընտրեցէք հոգաբարձու, ինչ ուզում էք արէք, միայն նոր բաներ չանէք, նոր օյիւններ չը հանէք: Ինչ որ կայ, այն «եօլայ կը տանենք», ինչ որ չ'կայ, առանց դրան էլ «եօլայ կը գնանք»... Եւ մի այդպիսի հասարակութեան մէջ մի քանի տղէտ մարդիք կարող են տասնութ տարի շարունակ հոգաբարձու ֆնալ, ամեն գործ իրանց քմահաճութեանը ծառայեցնել, և ոչ ոքից զանդառ չը լսի:

Բայց այդպէս լուռ չէ մնում բողոքականը, այլ նա յանկարծ լիզու է ստանում, երբ խնդիրը վերաբերում է գիտութիւնների ժողովրդի մէջ մոցնելուն, կամ գեղարւեստով զարճանալուն: Բողոքականները զիտութիւն ասելով ուրիշ բան չեն հասկանում, բայց եթէ անհաւատութիւն, սատանայի հնարքներ մարդկանց կապելու համար: Կան շատ բողոքականներ ի հարկէ որոնք զեռ միջնակարգ ուսման վերայ ծուռ աչքով են նայում և կորած են համարում այն պատանիներին, որոնք միջնակարգ դպրոցում ուսանում են: Իսկ բարձրագոյն կրթութիւնը արդէն բոլոր կրօնասէր բողոքականների աչքին վտանգաւոր է և սատանայական: Մի հարուստ բողոքական ուղարկել էր իւր որդոյն Ղորպատի գերմանացոց գիմնազիօնում ուսանալու, որպէս զի յետոյ մանէ համալսարանի ասուածաբանական ֆակուլտետը ապագայում պատուոք դառնալու համար: Երբ երիտասարդը վերջին դասաւանդումն էր, յայտնեց թէ ինքը մտադիր չէ պատուութեան համար պատրաստուելու, այլ պիտի շարունակէ բժշկական ֆակուլտետում: Եւ ասել կուզէ որ երիտասարդի հայրը ոչ միայն չը համաձայնեց նորա նպատակին, այլ և միջոց չը տուաւ, որ զոնեայ գիմնազիօնը աւարտէ. և ահա անբաղդ երիտասարդը վերադառնալով հայրենիք զբաղւած է Սե-Քաղաքում նաւթային գործերով: Բողոքականների կարծիքով ով որ բարձրագոյն գիտութիւններ սովորեց, նա այլ ևս չէ կարող ոչ Ասուած ընդունել, ոչ էլ կրօն ունենալ, քանի որ բոլոր փիլիսոփաները և գիտնականները անասուածներ են (?): Նոյնչափ ընդդէմ են բողոքականները գեղարւեստին իւր բոլոր ճիւղերով: Ամենալաւ ազգային երգերը նոցա աչքին հեթանոսական «մուսամազներ» են: Մուզիկան—«մարմին» անբարոյականութիւնը զրգռող զարճութիւն է (բացի եկեղեցական մուզիկայից): Քատրօնը, Օհ, Օհ, այդ խօսք արդէն դժուարի դուռն է: Շատ բողոքականներ, որոնք երբէք թատրոն մտած չը կան, կարծում են թէ բեմի վերայ բոլորովին սկզբ կանայք են դուրս գալիս, որպէս թէ թատրոնը Մահամէղի երկինքը լինէր... Վէպերը, բոմանները սոցա կարծիքով դատարի «պընգըլներ» են: Արձաններ կանգնեցնելը իզուր շուայլութիւն է և այլն:

Աւելցրէք այդ բոլորի վրայ այն ամենացաւալի երևոյթը, որ ամենատգէտ բողոքականը վերին աստիճանի ինքնավստահ է և

իրան անսխալական է համարում կրօնական խնդիրների մէջ: Ձէ որ ինքը «նոր ծնւած» է, ուստի ինչպէս կարող է սխալուել... Իսկ ով որ «է ծնւել հոգուց» նա մեր նոր ծնւած ողէտ կօշկակարի աչքին ոչինչ հասկացողութիւն ունի Վերինային բաների» մասին, նրա հետ խօսելն անգամ աւելորդ է քանի որ առանց նոր ծնւելու է կարելի ոչինչ հասկանալ: Մեր նոր ծնւածը նաչում է իրանից իսկապէս շատ աւելի հասկացող և շատ աւելի ազնիւ բնատրութիւն ունեցողների վերայ որպէս խղճալի, ողորմելի, թշաւա արարածները վերայ, որպէս երկրային սատանաների վերայ: Անի որքան զգուշի են սոցա ողէտ հայեացքները: Բողոքականները չեն ընդունում պապի անսխալականութիւնը, բայց իւրաքանչիւր Վերին ծնւած» բողոքական իւր սրտի մէջ մի անսխալական պապ է: Եւ որքան աւելի ողէտ են լինում սոքա, նոյնքան աւելի ինքնապատահութեամբ են խօսում, իրանց նշանաւոր ասուածաբաններ և ով գիտէ մարդարէներ են համարում: Շատերը սոցանից պատրաստ են իրանց քրիստոնէական եկեղեցոյ նոր ըրիշորմատորներ հռչակել, եթէ չը վախենան ծաղրի առարկայ դառնալուց:

Բնական է որ այդպիսի ներկայացուցիչներ ունեցող մի համայնքի մէջ խղճի և համոզմունքի ազատութիւն լինել է կարող: Բողոքականները կամենում էին, որ լուսաւորչականները նոցա չը հալածին: Եւ այդ նպատակին վաղուց արդէն հասել են: Բայց այդ նոյն բողոքականները աններելի կերպով հալածում են իրանց մէջ պատահող ազատ մտածողութեան նշոյլ ցուցնող երիտասարդին: Այդպիսի մէկը ենթարկւում է ջերմեռանդ բողոքականների կողմից արհամարանքի, ծաղրի, բամբասանքների, անխիղճ և խարդախ զրպարտութիւնների: Երանց ժողովատեղիներից քիչ է մնում որ ծեծելով դուրս անեն զարգացած երիտասարդներին: Բայց ո՛հ, եթէ մէկը թատերասէրների հետ բեմ դուրս եկաւ, հայոց լրագիրներին թղթակցեց, մանաւանդ եթէ քննադատեց բողոքականութեան մէջ տեղի ունեցող երեւոյթները: Այդպիսուն խօ արիւնը կը խմեն բողոքականները, եթէ հնար ունենան:

Առ այժմ այդքան...

Մի ուրիշ անգամ մենք ցոյց կը տանք թէ ինչ միջոցներ պէտք է ձեռք առնել հայ-բողոքական համայնքը ճշմարիտ յառաջադիմութեան, իսկական լուսաւորութեան ճանապարհի վերայ դնելու համար:

(Կը շարունակւի)